թեանց վրայ յեցեալք՝ կը հաստատեն իրենց մոլորութիւնքը (էջ 193), որոց դէմ Եզնիկ ևս յարմար զէնքեր կը գործածէ։

Ահա այս ամէն վկայութիւններէն և գիտողութիւններէն՝ որոց նմանք դեռ շատ կը գտնուին 'ի գիրս Եզնկայ և զորս զանց ըրինք չերկարելու համար, կրնամք են-թադրութիւն մ'ընել՝ եթէ ո՛չ բոլորովին ստոյգ, այլ յոյժ հաւանական, թէ Եզնիկ՝ որպէսզի ինքն իր անձին հակառակ չըլլայ, հարկ է որ ընդդէմ Հեթանոսաց, Պարսից, Յունաց իմաստնոց, որք բնաւ չէին հաւատար Ս. Գրոց և նորա վկայու-թեանց, խօսած լինի միայն բնութեան օրինակօք և բանական փաստիւք, այլ թէ ո՛չ՝ հարկ պիտի լինէր այն ատեն ցուցընել նախ և հաստատել Ս. Գրոց ճշմարտու-թիւնը և հեղինակութիւնը, և ապա իբրու զէնք գործածել նորա խօսքերը։

Աստի կը հետևի, թէ այն մասերն՝ որք աւելի քրիստոնէական հաւատոց կը վե-րաբերին և աստուածաբանութեան նրբագոյն խնդիրներ են, յորս գրեթէ միայն Ս. Գրոց վկայութիւնքը կը գործածէ, յայտ է՝ որ կամ առ հաւատացեալս ուղղած է, և կամ հաւանականաբար հերետիկոսաց և հերձուածողաց դէմ գրեր է, որ և ա-ռանձին մաս մի կը կազմէ՝ ուրոյն 'ի չորս մասանց կամ գրոց Եզնկայ։ 'Ի յաջորդն դեռ աւելի պիտի պարզեմք այն խնդիրս, անոր պատճառները քննելով, և ապա ընդ-հանուր կերպով խօսելով նոյն գրոց կարգաբանութեան մասին և նորա աղբիւրնե-րուն վրայ։

Տարուճակեցի — Հ. Յ. Թ.

ՀԻՆ ՔՆԱՐ

ՏԱՂ
Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Կանանցն կանխեալ եկին 'ի գերեզման...
Խունկս անուշ բերին 'ի յաւծանել ըզտէրն։
Ողբալով նըստեալ շուրջ ըզգերեզմանաւն
Լային արտասուաւք ըզկենդանին Յիսուս.
Սլացեալ սերովբէն սաւառնացեալ նըստէր,
Ի վերայ վիմին ոսկեապատ թեւաւքն.
Տրոհեալ անձկալին խանդաղատէր սիրով,
Ձեզ մեծ աւետիք այսաւր յարեաւ Քրիստոս.
Ահա տեղին ուր կայր, գնացէք աշակերտեալք,
Աւետարանեցէք եթէ յարեաւ Քրիստոս։
Նախ Պետրոս ընթացեալ և Յոհաննէս ըզկնի,
Գտին զվարշամակն չհաւատացին բանին.
Դարձան խընդութեամբ յոյժ խընդաբեր կանայքն
Նոյն աւետիս ցըրուեալ աշակերտացն։
Ի Գալիլիա 'ի ժամադրեալ տեղին,
Ընթացեալ տեսին երկիր պագին նըմա։
Նա հըզաւր փառաւք յարեաւ 'ի մեռելոց
Զդըժոխս աւերեաց և ազատեաց զգերեալսն։
Քրիստոսի փըրկչին կենդանարար Բանին
Վայելէ պատիւ փառք յաւիտեանս. ամէն։

digitised by A.R.A.R.@